ՖԵԼԻՔՍ ՁԻՄ. ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԾՈՎԱՆԿԱՐԻՉ

ԱՐԱ ՏԱԿՈԲՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու,
ՀՊՄՀ դոցենտ, ամբիոնի վարիչ

XIX դարի գեղանկարչական արվեստի անցողիկ ու խառնակ շրջանում է ստեղծագործել Բարբիզոնյան դպրոցի ներկայացուցիչ Ֆելիքս Ձիմը: Նրա արվեստը կամուրջ է հանդիսացել սույն դպրոցի և իմպրեսիոնիզմի միջև՝ ըստ էության համարվելով իմպրեսիոնիզմի նախակարապետներից մեկը, նրան անվանել են օրիենտալիզմի և հազար ու մի գիշերների նկարիչ:

Ֆելիքս Ձիմը (Ֆելիքս Ֆրանսուա Ժորժ Ֆիլիբեր Ձիմ) ծնվել է 1821 թ. փետրվարի 26-ին Ֆրանսիայի Բոն քաղաքում: Նրա հայկական ծագման մասին կան մի քանի փաստեր, որոնցում դրանց հեղինակներն անդրադառնալով նկարչի կենսագրությանը նշում են Ձիմերի՝ Էրզրումից եկած լինելու դարագան: Դրանցից առավել կարևոր է նկարչի կենդանության օրոք գրված Լուի Ֆուրնիեի «Մեծ նկարիչ, Ֆելիքս Ձիմ» աշխատությունը: Այդտեղ կարդում ենք. «*Մեր նկարչի դարը՝ Ժան Ձիմը եկել է Էրզրումից, որը հայկական քաղաք է: 1770 թ. նա մասնակցել է Լեհաստանի դեմ դատերազմին, որից հետո հաստատվել է Լեհաստանում… 1780 թ. նա ամուսնացել է Կետրին Կրուգերինի հետ: 1783 թ. դեկտեմբերի 22-ին ծնվում է նրանց որդին՝ Ժորժ Բարթելեմին, որը Ֆելիքս Ձիմի հայրն էր: 1807 թ. ֆրանսիացիների կողմից Դանցի գրավման ժամանակ գերի է ընկնում և տեղափոխվում է Բոն, ուր և բնակություն է հաստատում: Ազատություն ստանալով նա դառնում է դերձակ: 1810 թ. ապրիլի 25-ին ամուսնանում է Ֆրանսուազ Թինոնի հետ, որը մահանում է 1818 թ. դեկտեմբերի 14-ին: Մեկ տարի անց նա ամուսնանում է երկրորդ անգամ՝ Ան-Մարի Գուդոյի հետ: Այդ միասնությունից 1821 թ. փետրվարի 26-ին ծնվում է նկարիչ Ֆելիքս Ձիմը*»[1]:

Ահա թե ինչ է գրում Ֆելիքս Ձիմը իր օրագրում. «*Իմ մայրը՝ Ան Գուդո դը Նյուին, ամուսնացած է եղել իմ հոր՝ Ժորժ Բարթելեմի Ձիմի հետ, որը ծագումով լեհ, արմատներով հայ էր: Պատերազմի դատճառով տեղափոխվել են Ֆրանսիա և հաստատվել Բոնում*»[2]:

Արվեստաբան Ան Բուրդեն-Էլլերբանթը 1998 թ. Catalogue raisonné-ի առաջին հատորում գրում է. «*Ծնված 1821 թ. փետրվարի 25-ին, Բոն քաղաքում, Ֆելիքս Ֆրանսուա Ժորժ Ֆիլիբերը դերձակ Ժորժ Բարթելեմի Ձիմի (որը ծագումով լեհ, արմատներով հայ էր) և Ան-Մարի Գուդոյի որդին էր*»[3]:

2011 թ. Ձիմի ցուցահանդեսի առիթով հրատարակված «Ֆելիքս Ձիմ. ճանապարհորդություններ, տոլավորություններ և դարադոքսներ» կատալոգում

կարդում ենք. «*1821 թ. փետրվարի 25-ին Բոն քաղաքում ծնված Ֆելիքս Ֆրանսուա Ժորժ Ֆիլիբեր Ձիմը, դերձակ Ժորժ Բարտելեմի Ձիմի (որը ծագումով լեհ, արմատներով հայ էր), և Ան-Մարի Գոդոյի միակ որդին էր*»[4]:

Ձիմի հայկական ծագման մասին է ակնարկվում նաև Օնիկ Ավետիսյանի *Հայ նկարիչները և քանդակագործները* գրքում[5]:

Մեզ համար հույժ կարևոր այս տողերը համոզիչ փաստարկներ են Ֆելիքս Ձիմի հայկական ծագման վերաբերյալ:

Փաստորեն Ֆելիքս Ձիմի հայրը՝ Ժորժ Բարթելեմի Ձիմը (1783-1849) եղել է ազգությամբ հայ, Էրզրումցի Ժան Ձիմի որդին: Ժորժ Բարթելեմին եղել է դերձակ, որը ժամանակին գաղթել էր Լեհաստան, իսկ նկարչի մայրը՝ Ան-Մարի Գուդոն (1782-1837) Ֆրանսիայի Բուրգունդիա նահանգի Նյուի Սեն Ժորժ ավանից էր և սերում էր ջուլհակների ընտանիքից: Ֆելիքս Ձիմի հայրը ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ գերեվարվել և հայտնվել է Ֆրանսիայում՝ Բոնում: 1833 թ. Ձիմի ընտանիքը լքում է Բոնը ու տեղափոխվում Դիժոն:

Ֆելիքս Ձիմը մանկությունն աղրել է Բուրգունդիայում, որտեղ 1837-1838 թթ. Դիժոնի գեղարվեստի դպրոցում սովորում է ճարտարապետության և գծանկարի դասարաններում: Այդտեղ՝ 1938 թ. քննության ժամանակ, ճարտարապետական կոմպոզիցիա կատեգորիայում արժանանում է առաջին մրցանակի: Սակայն անկարգապահության և անհնազանդության պատճառով զրկվում է մրցանակից, իսկ անհարգալից պահվածքի համար հեռացվում է դպրոցից:

1839 թ. աղագա նկարիչը թողնում է Դիժոնը և տեղափոխվում Մարսել. ի դեպ, Մարսելում բնակվում էր իր խորթ եղբայրը: Այդտեղ Ֆելիքսը աղրուստի միջոցներ հայթայթելու համար որպես գրասենյակային ծառայող աշխատում է ճարտարապետ Մ. դը Մոնրիշիեի մոտ, որը զբաղվում էր Մարսելի ջրանցքների կառուցապատմամբ: Ֆելիքսը մեծ հաջողությամբ մասնակցում է քաղաքի շատրվանների գծագրման ու կառուցման աշխատանքներին, ստեղծում միաժամանակ քաղաքի հին առանձնատները պատկերող գրաֆիկական աշխատանքներ: Սիա և Մոնրիշիեն Ձիմի երկու ջրանկարները ներկայացնում են դ'Օռլեանի դուքսին: Վերջինս հավանելով երիտասարդ նկարչի գործերը՝ նրան պատվիրում է երեք ջրաներկ աշխատանք: Նրա կոչումն այլևս որոշված էր՝ նա պետք է նկարիչ դառնար:

Շուտով քաղաքի հին նավահանգստի շրջակայքում Ձիմը բացում է նկարչական դպրոց-արվեստանոց, որտեղ իր ուսուցման բարձր վարպետության շնորհիվ ունենում է քսանից ավելի աշակերտներ:

1841-ին Ձիմը որոշում է ճանապարհորդել դեպի Իտալիա: Ճանապարհին կանգ է առնում Նիցցա քաղաքում, որտեղ կարողանում է վաճառել մի քանի նկար: 1842 թ. Ձիմը հասնում է Հռոմ: Իտալիան, առավել ևս՝ Վենետիկը հետագայում դառնում է իր ստեղծագործությունների ոգեշնչման քաղաքը: Նա միան-

գամից զմայլվում է վենետիկյան շլացնող գեղեցկությամբ և ողջ կյանքի ընթացքում պատկերում է այդ հրաշալի քաղաքը:

1842-1847 թթ. Ձիմը շրջում է գրեթե ողջ Իտալիայով: 1849 թ. գալիս է Փարիզ և մի որոշ ժամանակ անց, ստեղծագործելու նկատառումով տեղափոխվում է քաղաքի մոտակայքում գտնվող Ֆոնտենբլոյի անտառների շրջակայքը: Այդտեղ ծանոթանում և մտերմիկ հարաբերություններ է ստեղծում Բարբիզոնյան դպրոցի[6] առաջին վարպետներ՝ Թեոդոր Ռուսսոյի, Նարսիս Դիասի և Ժան-Ֆրանսուա Միլլեի հետ: Ձիմին վերաբերող մի շարք աղբյուրներ վկայում են, որ գեղանկար աշխատանքների գլխավոր թեմաներն առավել լավ վերարտադրելու նպատակով Ձիմը Բարբիզոն անտառում բնակվել է գնչուական քառանիվ սայլի մեջ[7]: Հենց այդ միջավայրում Ձիմի մոտ ձևավորվում են Բարբիզոնյան դպրոցի գեղարվեստական միտումները, և շուտով նա դառնում է այդ ուղղության երևելի ներկայացուցիչներից մեկը:

Ստեղծագործելով բարբիզոնցիների հետ՝ Ձիմը, սակայն, իր կաղը չի խզում փարիզյան միջավայրից: Ընդհանրապես նկարչի արվեստի կատարելագործման մեջ մեծ նշանակություն են ունեցել Փարիզում գտնվող նկարչական տարբեր արվեստանոցները: Նա առավել մտերմանում է Բարբիզոնյան դպրոցի խոշորագույն վարպետ Ժյուլ Դյուպրեի հետ: Շփումները, նաև փարիզյան միջավայրն ամբողջությամբ փոխում են Ձիմի գեղարվեստական ընկալումները: 1849 թ. արվեստագետն առաջին անգամ ցուցադրվում է փարիզյան սալոնում, ուր ներկայացնում է Բոսֆորի, Վենետիկի և Հռոմի տեսարանները: 1859-ից Ձիմը տեղափոխվում է Փարիզի Մոնմարտր թաղամաս, որտեղ մեծ մասամբ ստեղծագործում էին ժամանակի նոր ուղղությունների կողմնակիցները: Սակայն աղրելով այդ միջավայրում, անդրադառնալով նորարարական ձևերին՝ Ձիմը այնուամենայնիվ պահում է Բարբիզոնյան դպրոցի ավանդույթները:

Որոշ ժամանակ անց Ձիմը մեկնում է Ֆլանդրիա, որտեղ ուսումնասիրում է XVII դարի խոշորագույն բնանկարիչների արվեստը: Ընդհանրապես 1840-1880 թթ. նկարիչը շրջագայում է Եվրոպայի և Արևելքի երկրներում, լինում է Անգլիայում, Հոլանդիայում, Բելգիայում, Սիցիլիայում, Ռուսաստանում[8], Կոստանդնուպոլսում[9], Հունաստանում, Ալժիրում, Բեյրութում, Եգիպտոսում… Սակայն իր երազների քաղաքը այդպես էլ մնում է Վենետիկը, ուր այցելում է տարին երկու անգամ:

1860 թ. Ձիմը տեղափոխվում է Մարտիգ, որտեղ կառուցում է իր արվեստանոցը: Ի դեպ, հենց Մարտիգը համարվում էր Պրովանսի Վենետիկը, երևի դա էլ պատճառ է հանդիսացել այդտեղ Ձիմի երկարաժամկետ մնալուն: Ակտիվ շփվելով մշակութային կյանքին՝ նա մասնակցում է Փարիզում կազմակերպված սալոններին, իսկ 1861 թ. Ձիմին տեսնում ենք Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսում:

1851 թ. խմբակային ցուցահանդեսին Ձիմին շնորհվում է երրորդ կարգի, իսկ 1852 և 1855 թթ.՝ առաջին կարգի մեդալներ: 1857 թ. նա արժանանում է «Պատվո լեգեոն» ասպետի կոչման, 1878-ին՝ սպայի և վերջապես 1908-ին՝ հրամանատարի:

1870 թ. արվեստագետը դառնում է Ֆրանսիացի նկարիչների սալոնի ժյուրիի անդամ, որտեղ նա ցուցադրվել է անընդմեջ: Այդտեղ Ձիմը մեծ աջակցություն է ցուցաբերում իմպրեսիոնիստներին[10]:

1880 թ. Ձիմը նոր արվեստանոց է զբաղեցնում Նիցցայում, որտեղ առիթներ ունեցավ շփվել եվրոպական բարձր արիստոկրատիայի ներկայացուցիչների հետ: Երանցից ոմանք նկարչություն են սովորում Ձիմի մոտ:

1901 թ. նշանակվում է ռազմածովային նավատորմի պաշտոնական նկարիչ: 1905 թ. Le Petit Palais թանգարանում Ֆրանսիայի նախագահ Էմիլ Լուբեի ներկայությամբ տեղի է ունենում Ձիմի գեղանկարչական հավաքածուի հանդիսավոր բացումը: 1908 թ. Մարտիգում Ձիմը բաց է անում իր տուն-թանգարանը:

Նկարիչը մահացել է 1911 թ. նոյեմբերի 10-ին Փարիզում՝ 90 տարեկանում:

Խոսելով Ֆելիքս Ձիմի գեղարվեստական ստեղծագործությունների մասին՝ պետք է նշենք, որ արվեստագետը հաջողությամբ աշխատել է նկարչական տարբեր տեխնիկաներով. օգտագործել է գրաֆիկական բազմաթիվ նյութեր, նկարել ջրաներկով, գուաշով: Պահպանվել են յուղաներկով արված գործեր՝ նույնիսկ կատարված թղթի վրա, որոնք դիտվել են որպես ջրաներկ աշխատանքներ: Կիրառել է խառը տեխնիկա, շատ ժամանակ՝ ստեղծագործել աղակու կամ քարի վրա: Նրա կտավներում հարթ քսվածքների կողքին երևում են ներկադանակի կիրառման հետքեր: Ֆելիքս Ձիմն օգտագործում էր բնական պիգմենտներ: Արվեստագետը սկզբնական շրջանում ճանաչման է հասել որպես ջրանկարի վարպետ: Նա ջրանկարի դասեր է ուսանել Մարսելում և Նիցցայում, կազմակերպել է մասնավոր դասընթացներ:

Իր ճանապարհորդությունների ընթացքում հետաքրքրասեր գեղանկարիչը ստեղծել է էկզոտիկ զանազան տեսարաններ, դիմանկարներ, թեմատիկ պատկերներ, նատյուրմորտներ, բազմաթիվ են նրա անիմալիստական նկարները: Այսուհանդերձ, Ձիմի նախասիրած ոլորտը ծովն էր: Նկարիչը համահռչակ ճանաչման հասավ Կոստանդնուպոլսի և Վենետիկի ծովային նկարչագեղ տեսարանների շնորհիվ: Նա «Ադրիատիկի գեղեցկուհու» պատկերներով կարծես շարունակեց վենետիկյան *վեդուտայի* ներկայացուցիչների գործը, միայն թե թարմ ու նոր շնչով:

Ֆելիքս Ձիմի ծովային բնապատկերների ընդհանուր բնութագիրը մեզ հղում է գեղանկարչական երկու սկզբնաղբյուրի: Առաջինը՝ Բարբիզոնյան դպրոցի ազդեցությամբ սկիզբ առած բնության զգայուն, հոգեհարազատ մեկնաբանությունն է, երկրորդը՝ վենետիկյան ծովախորշի և քաղաքային բնապատկերի՝ *վե-*

դուտայի արվեստը: Արդեն իսկ նշվել է, որ իր բազմաբովանդակ կյանքի ընթացքում առիթ է ունեցել շփվելու թե՛ արևելյան, թե՛ արևմտյան մշակույթներին և իր մեջ ներամփոփել այդ երկու շերտերի կարևոր հատկանիշները: Պատահական չէ, որ նրա ուշադրությունից դուրս չեն մնացել Կ. Պոլսի XIX դարի քաղաքային եռուզեռը, ճոխ արևելյան կենցաղային հանդերձանքը և այն ընդհանուր գրավիչ մթնոլորտը, որը դարի կեսից սկսած դեռի իրեն էր ձգում եվրոոպացի նկարիչներին: Եթե եվրոոպական արվեստի համար Արևելքի անդրադարձները էկզոտիկ բնույթ կրեցին և անվանվեցին «օրիենտալիստական», աղա Ձիմի ոարագայում դիտարկումները փոքր-ինչ այլ էին: Նկարիչը երևույթներին մոտենում է կարծես ներքին դիտարկումից հրճվալի հայացքով: Արևելյան շուքը, քաղաքի գեղեցկությունը Ձիմի մոտ մեկնաբանվում են Բոսֆորի կաղուտակ ջրերի խորքային հեռուներից, ինչը ողջ տեսարանը դարձնում է ավելի թրթիռային և տոնական:

Ձիմի ծովային ոատկերներին բնորոշ է քաղաքի ցամաքի ներգրավումը հորիզոնի հեռավոր հարթությունների կտրվածքում: Տեսարանները ընդհանուր առմամբ համայնապատկերային են, և ծովը դառնում է մարդկային կյանքի և ընթացքի վկան և նույնիսկ ակտիվ գործող անձը: Կ.Պոլսի ծովային ոատկերների սյուժեներն ու վերնագրերն իսկ վկայում են մարդ-բնություն ներդաշնակության մասին. «Կոստանդնուոպոլիս», «Արևամուտը Բոսֆորի ափերին: Սբ. Սոֆիայի տաճարը» (գուն. ոատկ. 4), «Առագաստանավը Բոսֆորում», «Բոսֆորի տեսարանը»: Այս ծովապատկերների գունաշարը միօրինակ չէ և կախված է ոատկերված օրվա ժամից, ընդհուոդ մինչև նկարի ներսում իշխող տրամադրությունը: Որոշ նկարներում իշխում է դեղնաօքրան, իսկ առավել մեծ քանակի գործերում գերիշխողը երկնագույնի և կաղույտի տոնային նուրբ անցումներն են՝ տեղ-տեղ շղարշված մոխրասպիտակ օդային քուլաներով: Հասկանալի է՝ ծովը ամենուր ծով է, և չնչին տարբերություններով միանման է բոլոր հարթություններում: Սակայն Ձիմի ծովը տարբեր է մյուս ծովերից, քանզի նրան հետաքրքրում է հեռահայաց ընդգրկումը ծովախորշի խորքերից: Բոսֆորի ջրերից երևում է Պոլիսը՝ իր հանրահռչակ Սուրբ Սոֆիայի կորագմբեթով և մինարեթներով, սուլթանական ոալատով, նշմարվում են փողոցները, մարդկային ֆիգուրները, ծովախորշի ալիքներից տատանվող առագաստանավերը, լաստանավերը, ծովափին հետուառաջ ընթացող բեռնակիրները, սուլթանական նավերը՝ կանանոցով:

Ձիմին հետաքրքրող քաղաքային դրվագները և բնության տարերքները տարաբնույթ ձևակերտումներ են ստացել, որոնցից առավել առինքնող են վենետիկյան մարմնավորումները: Սրանցում մոտեցումը նախորդի համեմատ գրեթե չի փոխվել, սակայն հասկանալի է, որ փոխվել է քաղաքային միջավայրի ոատկերումը: Այսուհետ գեղեցկուհի Վենետիկը դառնում է նկարչի ոգեշնչ-

ման աղբյուրը, ինչպես եղել է շատերի համար: Ադրիատիկի ջրային տիրույթներից լայնահորիզոն տեսարան է բացվում դեպի Սբ. Մարկոսի հրապարակը, որտեղ ուրվագծվում են տաճարի գմբեթները, Դոժերի պալատի կեռագծային քիվերը, մարդկային ֆիգուրները: Մեկ այլ տեսարանում վենետիկյան Մեծ ջրանցքը՝ հանրահռչակ Ռիալտոյի կամրջով նավակը հայացքի հետ միասին սահեցնում է վենետիկյան նեղլիկ անցումներով: Մեկ ուրիշում ծովախորշից հեռվում երևում է Սբ. Սալյուտե տաճարը: Եվ ամենուր անկայուն գծով երերացող գոնդոլներ, գոնդոլիերներ, երգիչներ և համընդհանուր ռոմանտիկ տրամադրություն: Եթե Կ.Պոլսի միջավայրում արևելյան եռուզեռն էր իշխում, ապա Վենետիկում՝ ամենուրեք բարձրատոհմիկների շքեղ հանդերձված խմբեր: Վենետիկյան ջրերի ընդհանուր անդրադարձները ակամայից թեթև, սահուն, նուրբ քսվածքներով ստեղծված մթնոլորտ են ձևավորում, որում ակամայից սկսում են նշմարվել իմպրեսիոնիստական գունատոնային խաղերը: Վետաքրքրական մի դիտարկում ևս. Ֆելիքս Ձիմի վենետիկյան պատկերներում դրսևորվում են դեռևս նոր չձևավորվող իմպրեսիոնիստական տարրեր, այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է ծովային տարերքին, իսկ շատ դրվագներում, երբ բնության գրկում մարդկային ֆիգուրներն են ներկայանում, ակամայից առաջ է գալիս բեմական թատերայնություն՝ կարծես սկիզբ առած Անտուան Վատտոյի կնամեծար տեսարաններից, և, որքան էլ տարօրինակ հնչի, անմիջականորեն հիշեցնող Ադոլֆ Մոնտիշելիի նույն բովանդակությամբ տեսարանները: Ձիմի վենետիկյան շարքից հիշատակելի են «Ծովային տեսարան: Վենետիկի շրջակայքը», «Վենետիկ», «Նավակները Վենետիկի շրջակայքում», «Գոնդոլները Վենետիկի Մեծ ջրանցքում» (գուն. պատկ. 5), «Հանգիստ ծառերի տակ Վենետիկի շրջակայքում», «Տոնակատարություն Վենետիկում» ստեղծագործությունները:

Ձիմի ծովային պատկերներն առանձնանում են հարուստ գունաշարով ու անթերի կատարմամբ: Իր մի շարք ստեղծագործություններում նկարիչը մոտենում է վերացական արվեստի պայմանական ձևերին: Այդտեղ ակնառու երևում է անգլիացի նկարիչ Ուիլյամ Թյորների ազդեցությունը: Այդպիսի նկարներում եթե նկարիչը առաջին պլանում դեռ պահում է այուժեի պայմանական, սակայն ռեալիստական մոտեցումը (մարդկային ֆիգուրները, նավակների ճշգրիտ ուրվագծերը, ծովափնյա կառույցների ճարտարապետությունը), ապա կտավի երկրորդ, երրորդ պլաններում և առավել ևս հորիզոնից վեր՝ երկնքում, Ձիմը հասնում է վերացական, ասել է թե՝ աբստրակտ ձևերի: Իհարկե, ինչպես ասվեց, դա մեծն Թյորների ազդեցությունն էր: Վենց դա էլ առիթ է տվել մի շարք արվեստաբանների Ձիմին համարել նաև մոդեռն արվեստի ներկայացուցիչ:

Պարզ է մի բան, որ ապրելով եվրոպական միջավայրում Ֆելիքս Ձիմը ամ-

բողջովին ներծծվում է եվրոպական գեղագիտությամբ, բայց և իր ուրույն խոսքն ասում այդ նույն գեղագիտության մեջ:

Փաստորեն, հայկական ծագում ունեցող աշխարհահռչակ նկարիչներից ինչպես ռոկոկոյի դարաշրջանի ֆրանսիացի դիմանկարիչ, արվեստի գործերի գիտակ և նկարավաճառ Ժան Անդրե Ժոզեֆ Ավեդը (1702-1766), Բուխարեստի գեղարվեստի ազգային դպրոցի հիմնադիր, ռումինացի նկարիչ Թեոդոր Ամանը (1831-1891), Մյունխենի գեղարվեստի դպրոց-ստուդիայի ղեկավար, հունգարացի Շիմոն (Սիմոն) Ղոլոշին (1857-1918), Տեր-Աքսենտովիչների հայկական տոհմից սերող՝ Կրակովի գեղարվեստների ակադեմիան գլխավորած, «Շտուկա» ընկերության հիմնադիրներից լեհ նկարիչ Թեոդոր Աքսենտովիչը (1859-1938), այնպես էլ Ֆելիքս Ձիմը դարձավ համաշխարհային հռչակ վայելող արվեստագետներից մեկը:

1 L. Fournier, *Un Grand Peintre, Felix Ziem*, Beaune, 1897, p. 13.

2 Տե՛ս P. Miquel, “Felix Ziem, 1821-1911”, *Catalogue Raissonné*, Paris, 1978, էջ 17:

3 A. Burdin-Hellebranth, «Felix Ziem, 1821 – 1911», *Catalogue Raissonné*, T. I, 1998, p. 21.

4 N. Durand, L. Ménetrier, F. Baille, *Felix Ziem: Voyages, Impressions et Paradoxes*, Catalogue, Musée de Beaux-arts, 2011, p. 176.

5 O. Avedissian, *Peintres et sculpteurs Arméniens*, Le Caire, 1959, p. 147.

6 Ֆոնտենբլո անտառում գտնվող Բարբիզոն գյուղի մոտ ստեղծագործող մի խումբ բնանկարիչներ կոչվեցին Բարբիզոնյան դպրոցի ներկայացուցիչներ:

7 Կան տեղեկություններ, ըստ որոնց Բարբիզոն գյուղի մոտ Ձիմը անգամ գնել է մի տուն, որտեղ աղրելով և ստեղծագործելով ավելի լավ է զգացել շրջակայքի կենցաղը ու միջավայրի բնորոշ հատկանիշները:

8 Այդտեղ, 1843-1844 թթ., հրավիրված լինելով արքայազն Գագարինի կողմից՝ նա ջրաներկի տեխնիկայով նկարել է սովորեցնում բարձրաշխարհիկ հասարակության անդամներին:

9 Ձիմը Կոստանդնուպոլիս առաջին անգամ հասել է 1856 թ.:

10 Որոշ տեղեկությունների համաձայն՝ Ձիմը մեծ դերակատարություն է ունեցել Ֆրանսիացի իմպրեսիոնիստ Կլոդ Մոնեի՝ արվեստի աշխարհ մուտք գործելու գործում, իսկ 1886 թ. հանդիպել է Վինսենթ Վան Գոգի հետ, վերջինս հիացմունքով է արտահայտվել Ձիմի կիրառած գույների մասին՝ մասնավորապես շեշտել է կապույտների վարպետ օգտագործումը: Բացի այդ, 1897-ից Ձիմը մտերմանալով քանդակագործ Օգյուստ Ռոդենի հետ՝ նվեր է ստանում է նրա գործերից մեկը:

FÉLIX ZIEM: THE MARITIME PAINTER OF ARMENIAN ORIGIN

ARA HAKOBYAN,
PhD in Art history,
Associate Professor and
Head of the Chair at ASPU

The Armenian society of art lovers is mostly unfamiliar with the French Artist Félix Ziem. This is the first public attempt to get acquainted with the works by this talented artist and be aware of his Armenian origin through the researches published in the period of his professional trajectory. This maritime painter, who bridges up The Barbizon School and Impressionism, currently, is of considerable interest for the professional circles. The paper comprises an interpretation of the seascapes created by the Painter that are attributed to the periods of his creativity in Venice and Constantinople. The scenes created by his brushstrokes – through the peace and serenity – seem to tranquilize the viewers' spirit and to incite somehow hidden sense of eternity.

ФЕЛИКС ЗИМ. МАРИНИСТ АРМЯНСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ

АРА АКОПЯН
Кандидат искусствоведения,
доцент и заведующий кафедрой в АГПУ

Имя французского художника Феликса Зима в основном неизвестно армянским любителям искусства. Это первый случай, когда благодаря своевременно изданным исследованиям, узнаем о талантливых произведениях художника и об его армянском происхождении. Художник, который являлся мостом между "Барбизонской школой" и импрессионизмом, сегодня вызывает большой интерес в профессиональной среде. В статье представлены наиболее свойственные художнику венецианские и константинопольские виды. Его мирные и спокойные пейзажи словно успокаивают душу зрителя и в какой-то степени создают впечатление скрытой вечности.